ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊՈՂՈՍՅԱՆ ՍԵՎԱԿ ԱՐԹՈՒՐԻ

ՀԱՆՑԱԿԻՑՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2021

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ПОГОСЯН СЕВАК АРТУРОВИЧ

ОСОБЕННОСТИ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ СОУЧАСТНИКОВ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.05 – “Уголовное право и криминология; уголовно-исполнительное право”

ЕРЕВАН – 2021

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա. Հ. Գաբուզյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Ռ. Մարգարյան
իրավաբանական գիտությունների թեկնածու Ա.Հ. Հովհաննիսյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիր

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թվականի նոյեմբերի 26-ին, ժամը 14^{30}-ին ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (Երևան – 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2021 թվականի հոկտեմբերի 15-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար՝ իրավ. գիտ. թեկ., դոցենտ **Տ. Հ. Սուջյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор **А. А. Габузян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **А.Р. Маргарян**
кандидат юридических наук **А.О. Оганисян**

Ведущая организация: **Образовательний комплекс полиции РА**

Защита диссертации состоится 26-ого ноября 2021 г. в 14^{30} часов на заседании Специализированного совета ВАК РА 001 по юриспруденции при Ереванском государственном университете (Ереван - 0025, Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 15-ого октября 2021 г.

Ученый секретарь специализированного
совета: кандидат юрид. наук, доцент **Т. О. Суджян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հանցագործությանը մեկից ավելի անձանց մասնակցությունը ոչ միայն բարձրացնում է հանցագործության վտանգավորության բնույթն ու աստիճանը, այլև հանցագործությանը մասնացկած անձանց արարքների որակման հարցում մի շարք դժվարություններ է առաջացնում: Բացի դրանից, հանցավորության կառուցվածքում հանցակցությամբ, հատկապես խմբի կողմից հանցանքը կատարելու դեպքերի մասնաբաժնի ավելացումը, վկայում է նաև հանցավորության վտանգավորության մակարդակի բարձրացման մասին, քանի որ բարձրանում է հանցավորության մեջ կազմակերպվածության մակարդակը: Ուստի հանցակցությամբ կատարվող հանցագործությունների դեմ արդյունավետ պայքարը ժամանակի հրամայականներից է:

Վիճակագրական տվյալները հիմք են տալիս ենթադրելու, որ խմբակային հանցագործությունների մասնաբաժինը հանցավորության մեջ ՀՀ-ում աճի միտում է ցուցաբերում: Այսպես, եթե 2014 թ. այն կազմել է 2,7%, ապա 2016-ին՝ 2,9%: Ճիշտ է 2018 թ. այն կազմել է 1,9%, սակայն, հեղինակը կարծում է, որ դա ՀՀ-ում տիրող սոցիալ-հոգեբանական մթնոլորտի և դրա պատճառով հանցավորության այս տեսակի լատենտայնացման հետևանք է:

Հանցակցությամբ կատարվող հանցանքների դեմ արդյունավետ պայքարի երաշխիքներից է նաև քրեական օրենսդրությունը. արդարացի պատիժները, հանցակիցների արարքների ճիշտ և հիմնավորված որակումները, այս առումով քրեական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործումը կարող են նպաստել այս հանցատեսակի դեմ պայքարի արդյունավետությանը: Մինչդեռ, մեր հետազոտությունները ցույց տվեցին, որ քրեական օրենսդրության անկատարության հետևանքով, իրավակիրառ պրակտիկան հաճախ սխալ ուղղությամբ է ընթանում, հանցակիցների արարքները ոչ ճիշտ են որակվում ինչի հետևանքով նշանակվում է կամ չհիմնավորված խիստ կամ հակառակը՝ մեղմ պատիժ: Բնականաբար ընկնում է պայքարի արդյունավետությունը, հեղինակազրկվում է օրենքը և այն կիրառողը:

Եթե խոսվի օրենքի մասին, ապա պետք է նշել, որ գործող օրենսդրությամբ թերի կամ ոչ ճիշտ են կարգավորված հանցակցի սահմանազանցման, հանցագործությունից հանցակցի կամովին հրաժարվելու, չհաջողված հանցակցության, հանցակիցների տեսակների, ձևերի և մի շարք այլ հարցեր: Մասնավորապես, ժամանակն է քրեական օրենսդրություն ներմուծել հանցակցության փորձի ինստիտուտը, կատարելագործել դրդչության և օժանդակության օրենսդրական բնորոշումները և այլն:

Վերոգրյալը պայմանավորում է ընտրված թեմայի արդիականությունը

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն են այն հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են հանցանքը հանցակցությամբ կատարելու դեպքերում: Հետազոտության առարկան հանցակցության ինստիտուտը կարգավորող նորմերն են:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը հանցակցության ինստիտուտի խոր ուսումնասիրությունն է, դրանում առկա հակասությունների, անկատարությունների և թերությունների բացահայտումը: Այդ նպատակին հետամուտ առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- հետազոտել և բացահայտել հանցակցության հատկանշները,
- վեր հանել հանցակիցների տեսակների օրենսդրական բնորոշման, յուրաքանչյուր հանցակցի գործառութային առանձնահատկությունները,
- հետազոտել հանցակցության տարբեր ձևերը, հանցանքը կատարելու դեպքում արարքի որակման առանձնահատկությունները,
- ուսումնասիրել արարքի որակման առանձնահատկությունները հանվակցությամբ հանցանքը կատարելու հատուկ դեպքերում,,

–իրականացրած հետազոտության հիման վրա առաջարկություններ մշակել՝ ուղղված քրեական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Հայրենական քրեական իրավունքի գիտության մեջ հանցակացության տեսական և գործնական հիմնախնդիրների անդրադարձել է Ռ. Մելքոնյանը, այն էլ նախկին քրեական օրենսգրքի գործողության պայմաններում, որից հետո, համենայն դեպս մոտ քսան տարի մենագրության մակարդակով այս հարցերի անդրադարձ չի եղել:

Խորհրդային ժամանակաշրջանի և ռուսական ժամանակակից քրեաիրավական գիտության մեջ հանցակցության հարցերի անդրադաձել են Ն.-Կուզնեցովան, Գ. Կրիգերը, Ռ. Գալիակբարովը, Ա. Ռառոգը, Գ. Եսակովը, Վ. Վասյուկովը, Ն. Իվանովը, Ֆ. Բուռչակը, Ռ. Ռիժկովը, Մ. Կովալյովը և ուրիշներ: 2007 թ. լույս տեսավ Քրեական իրավունքի հանրագիտարանի 6-րդ հատորը՝ նվիրված հանցակցության ինստիտուտին: Հանցակցությանը վերաբերող առանձին հարցեր քննարկվել են հայ գիտնականներ Ս. Ավետիսյանի, Ս.Առաքելյանի, Պ. Մկրտչյանի, Լ. Գրիգորյանի աշխատություններում:

Հարկ է նկատել, սակայն, որ չնայած այս աշխատանքներում մանրամասն քննարկվել են հանցակցությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, այնուամենայնիվ շատ հարցեր դեռևս մնում են չպարզաբանված կամ այլ լուծումների կարիք են զգում:

Հետազոտության իրավական և փորձառնական հիմքը: Հետազոտության իրավական հիմքն են կազմել ՀՀ քրեական օրենսգիրքը, ՌԴ, Ֆրանսիայի, ԳԴՀ, Իսպանիայի և այլ երկրների քրեական օրենսգրքերը: Հետազոտության փորձառնական հիմքն են կազմել հանցակցության վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները, ինչպես նաև ՀՀ առաջին ատյանի դատարաններում քննված 100 քրեական գոծերով կայացրած դատավճիռները: Օգտագործվել են նաև հեղինակի կողմից քննված որոշ գործերի տվյալներ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության ընթացքում կիրառվել են անալիզի և սինթեզի, պատմահրավական, համեմատահրավական, համակարգակառուցվածքային մեթոդները, ինչպես նաև կատարվել է դատական ակտերի ուսումնասիրություն:

Հետազոտության գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթն այն է, որ սույն ատենախոսությունը այն եզակի աշխատանքներից է որում անդրադարձ է կատարվել հանցակցության ինստիտուտին առնչվող գրեթե բոլոր խնդիրներին, ընդ որում, շատ հարցերի նկատմամբ նոր մոտեցումներ դրսևորելով: Գիտական նորույթն արտահայտվում է նաև **պաշտպանության ներկայացվող դրույթներում,** որոնք հանգում են հետևյալին.

1. Քանի որ հանցանքը խմբի կողմից կատարած լինելու հանգամանքը կարող է մեղսագրվել միայն այն դեպքում, երբ հանցագործության կատարմանը մասնակցում են հանցագործության սուբյեկտ համարվող առնվազն

երկու կամ ավելի անձ, բայց արարքի հանրային վտանգավորությունը բարձրանում է նաև այն դեպքում, երբ հանցագործությունը կատարում է այն անձանցից կազմված խումբը, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության, ապա այն հոդվածներում, որտեղ հանցանքը խմբի կողմից կատարելը նախատեսված է, որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք, ծանրացնող հանգամանք նախատեսել նաև հանցանքը այնպիսի անձի հետ համատեղ կատարելը, որը ենթակա չէ քրեական պատասխանատվության:

2. Կատարողի բոլոր հատկանիշները և դրսևորումները արտացոլելու համար առաջարկվում է կատարողի հետևյալ բնորոշումը՝ «Կատարող է համարվում այն անձը, ով որպես կատարող ենթակա է քրեական պատասխանատվության տվյալ հանցանքի համար և անմիջականորեն կատարել է հանցանքը կամ դրա կատարմանն անմիջականորեն մասնակցել է այլ անձանց (համակատարողների) հետ համատեղ, կամ այլ անձանց (համակատարողների) հետ համատեղ մասնակցել է հանցանքի կատարմանը այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության կամ ենթակա չեն քրեական պատասխանատվության տվյալ հանցանքի համար որպես կատարող կամ հանցանքը կատարել են անզգուշությամբ ինչպես նաև այն անձը ով հանցանքը կատարել է միայնակ՝ նշված անձանց օգտագործելու միջոցով:»

3. Կազմակերպիչի ինստիտուտն առանձնացնելը ավելորդ է թվում. այն գործնականում ավելի շատ խնդիրներ է առաջացնում, քան լուծում է դրանք, ուստի առաջարկվում է այն դեպքերում, երբ անը և՛ դրդում է, և՛ օժանդակում է հանցագործությանը, նրա արարքը որակել Հատուկ մասի համապատասխան հոդվածով՝ հղում կատարելով 38 հոդվածի չորրորդ և հինգերորդ մասերի վրա, իսկ, եթե արարքը սահմանափակվել է զուտ հանցանք կատարելու դիտավորություն, ցանկություն առաջացնելով կամ հանցագործությանը որևէ ձևով նպաստելով, ապա արարքը պետք է որակել Հատուկ մասի համապատասխան հոդվածով՝ հղում կատարելով 38-րդ հոդվածի միայն չորրորդ կամ միայն հինգերորդ մասի վրա:

4. Դրդչությունը հնարավոր է նաև միակողմանի սուբյեկտիվ կապի դեպքում, երբ հանցանք կատարելու դիտավորություն են առաջացնում այնպես, որ կատարողը չի գիտակցում այդ մասին, բայց անձի հոգեբանական

ազդեցության շնորհիվ նրա մեջ կոնկրետ հանցանք կատարելու դիտավորություն է առաջանում, ինչին ձգտում էր դրդիչը: Ընդ որում, նման հետևանքի դրդիչը կարող է հասնել նաև անգործությամբ:

5. Չհաջողված հանցակցության դեպքերում հանցակիցներն իրականացնում են հանցակցության կոնկրետ տեսակ (դրդիչ, օժանդակող) համարվող արարքի օբյեկտիվ կողմի մի մասը, կամ նույնիսկ ամբողջ օբյեկտիվ կողմը, սակայն այդպես էլ չի հաջողվում հանցակցությունն ավարտին հասցնել: Այլ կերպ ասած, նրանք փորձում են հանցակցել, ինչը չի հաջողվում իրենց կամքից անկախ հանգամանքներով: Ուստի առաջարկվում է օրենքի հետևյալ ձևակերպումը՝ <<Եթե հանցագործությունը չի ավարտվում դրդիչի կամ օժանդակողի կամքից անկախ հանգամանքներով, նրանք ենթարկվում են պատասխանատվության իրենց դիտավորության մեջ ընգրկված հանցագործությանը հանցակցելու փորձի համար՝ հղում կատարելով սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածին, ինչպես նաև սույն օրենսգրքի 38-րդ հոդվածի համապատասխան մասին և 34-րդ հոդվածին>>:

6. Եթե համակատարողը շարունակվող հանցագործությանը միացել է հետագայում, առանց նախնական համաձայնության, ապա ամբողջ շարունակող հանցագործությունը կմեղսագրվի նրան, եթե նա գիտակցել է, թե ինչ է կատարվել մինչև իր միանալը, (այդ մասին նրան տեղեկացրել են մյուս հանցակիցները) և ինչ է կատարվելու ապագայում, ինչին է ընդհանրապես ուղղված մյուս համակատարողների արարքը և նա փաստորեն նպաստել է մյուս հանցակիցների դիտավորության իրականացմանը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ այն հայրենական քրեական իրավունքում հանցակցության հիմնախնդիրների վերաբերյալ կատարված այն եզակի համալիր հետազոտությունն է, որի արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական ուսումնասիրություններում: Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ դրա արդյունքները կարող են օգտագործվել քրեական օրենսդրության կատարելագործմանն ուղղված օրինաստեղծ գործունեության ընթացքում, իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև ուսումնական գործընթացում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության հիմնական դրույթները և եզրահանգումները քննարկվել են Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնում, ինչպես նաև տեղ են գտել հեղինակի կողմից ատենախոսության թեմայով հրապարակված և դրա բովանդակությունն արտացոլող գիտական հոդվածներում

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են տասներկու պարագրաֆ, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի ու գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում ներկայացվել են հետազոտության թեմայի արդիականությունը, մշակվածության աստիճանը, օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, հետազոտության մեթոդաբանական, տեսական, իրավական և փորձառական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

Հանցակցության հատկանիշները, հանակիցների տեսակները, դրանց օրենսդրական բնորոշման եվ պատասխանատվության առանձնահատկությունները վերտառությամբ առաջին գլուխը բաղկացած է հինգ ենթագլուխներից:

Հանցակցության հասկացությունն ու հատկանիշները առաջին գլխի առաջին ենթագլխում հեղինակը քննարկելով իրավաբանական գրականության մեջ վեճերի տեղիք տվող այն հարցը, թե արդյոք առկա է մի խումբ անձանց կողմից հանցանքը կատարելու հատկանիշը այն դեպքերում, երբ հանցանքը կատարող խմբի անդամներից միայն մեկն է հանցագործության սուբյեկտ և ենթակա քրեական պատասխանատվության իսկ մյուսները հանցագործության սուբյեկտ չեն՝ քրեական պատասխանատվության տարիքի հասած չլինելու կամ անմեղսունակ լինելու հետևանքով: Հեղինակը իր համաձայնությունն է հայտնում այն հեղինակների հետ, որոնք գտնում են, որ խումբը հանցակցության ձև է, ուստի դրան պետք է հատուկ լինեն հանցակցության բոլոր հատկանիշները:

Քննարկելով հանցակցության հաջորդ հատկանիշը, այն է համատե-

ղությունը և նշելով, որ քրեական իրավունքի տեսության մեջ ընդունված է, որ հանցակցությունը հնարավոր է մինչև հանցագործությունը ավարտվելը, հեղինակը հիմնավորում է, որ հանցակցությունը հնարավոր է մինչև հանցագործության փաստական ավարտը:

Հանցագործության կատարողը առաջին գլխի երկրորդ ենթագլխում քննարկելով կատարողի հետ կապված խնդրահարույց հարցերը հեղինակը նախ նշում է, որ կատարող կարող է համարվել այն անձը, որը որպես կատարող ենթակա է քրեական պատասխանատության տվյալ հանցատեսակի համար և կատարում է տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը կամ այն կատարում է միջնորդավորված ձևով: Բացի այդ նշվում է, որ համակատարումը հնարավոր է միջնորդավորված իրականացնել: Ամփոփելով կատարողի վերաբերյալ հետազոտության արդյունքները հեղինակը տալիս է կատարողի սեփական հասկացությունը:

Հանցագործության կազմակերպիչի հասկացության և պատասխանատվության հիմնախնդիրները վերտառությամբ առաջին գլխի երրորդ ենթագլխում հեղինակը հիմնավորում է իր այն գաղափարը, որ կազմակերպիչի ինստիտուտն առանձացնելն ավելորդ է, որ նա փաստորեն դրդիչ է կամ օժանդակող կամ էլ երկուսը միասին, ինչի դեպքում պետք է հղում կատարել 38 հոդվածի չորրորդ կամ հինգերորդ մասերի վրա կամ էլ երկու մասերի վրա միաժամանակ:

Հանցագործության դրդիչի օրենսդրական բնորոշման կատարելագործման հարցեր վերտառությամբ առաջին գլխի չորրորդ ենթագլխում քննարվում են դրդիչ օրենսդրական բնորոշման հարցերը: Հեղինակը հիմնավորում է այն դրույթը, որ դրդչությունը հնարավոր է նաև միկողմանի սուբյեկտիվ կապի դեպքում: Հեղինակը նաև նշում է, որ դրդիչի մասին խոսելիս անհրաժեշտ է նշել, որ դրդչությունն առկա է այն դեպքում, երբ հանցագործության են դրդում քրեական պատասխանատվության ենթակա անձին: Եթե հանրավտանգ արարքի են դրդում այնպիսի անձի որը ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ արարքը կատարում է դրա սոցիալական նշանակությունը չգիտակցելով, և դրդողը գիտակցում է դա, ապա առկա է հանցագործության միջնոդավորված կատարումը:

Հանցագործության օժանդակողի հասկացությունը, օժանդակության տեսակները վերտառությամբ առաջին գլխի հինգերորդ ենթագլխում հեղի-

նակը հիմնավորում է այն գաղափարը, որ օժանդակողի արարքների սպառիչ ցանկ պետք չէ նախատեսել. օժանդակություն կարող է համարվել յուրաքանչյուր արարք որով անձը նպատում է, օգնում է հանցանքի կատարմանը, եթե իհարկե այն բավարարում է հանցակցության հատկանիշներին: Ուստի առաջարկվում է օժանդակող համարել յուրաքանչյուր անձի, որը որևէ ձևով օգնում է հանցանքի կատարմանը:

Հանցակցության ձևերը վերտառությամբ երկրոդ գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից:

Հանցակցության ձևերի դասակարգումը երկրորդ գլխի առաջին ենթագլխում հեղինակը հիմավորում է այն դիրքորոշումը, որ հանցակցությունը ձևերի դասակարգելու հիմքում պետք է դրվեն հանրորեն վտանգավոր արարքի կատարմանը նպաստելու եղանակը, նաև հանցակիցների միջև սուբյեկտիվ կապը: Այս տեսակետից առաջարկվում է հանցակցության ձևերը դասակարգել օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներով: Հանցակցության ձևերի դասակարգում է առանձնացնում նաև քրեական օրենսդրությունը, որը, որոշ առումներով համահունչ է նշված օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներին: Դրանք են՝ 1. բարդ հանցակցությունը, որում առանձնանում են կազմակերպիչը, դրդիչը, օժանդակողը, կատարողը, կամ բացի կատարողից ևս մեկ այլ հանցակից, 2. համակատարումը, երբ հանդես են գալիս երկու կամ ավելի կատարողներ, ինչն, ըստ էության նույնանում է խմբին 3. կազմակերպված խումբը, 4. հանցավոր համագործակցությունը:

Հանցագործությունների որակումը հանցակցության տարբեր ձևերի դեպքում վերտառությամբ երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում հեղինակը ներկայացնում է հանցակցության տարբեր ձևերի դեպքում հանցակիցների արարքները որակելու հարցերը:

Հեղինակը նշում է, որ հանցանքը կազմակերպված խմբի կողմից կատարելը ՀՀ քրեական օրենսգրքի բազմաթիվ հոդվածներում նախատեսված է որպես ծանրացնող հանգամանք իսկ հանցավոր համագործակցության կողմից կատարելը ոչ մի հոդվածում նախատեսված չէ: Ինչպես պետք է որակել արարքը այն դեպքում, երբ հանցանքը կատարվում է հանցավոր համագործակցության կողմից: Նման իրավիճակ հնարավոր է նաև հանցանքը մի խումբ անձանց կողմից կատարելու դեպքում երբ, հանցագործությունը կատարվում է հանցակցության մի ձևով, ասենք նախնական համաձայնութ-

յամբ խմբի կողմից, մինչդեռ քրեական օրենքի Հատուկ մասի հոդվածում այդ ձևը՝ որպես ծանրացնող հանգամանք, չի նախատեսվում, այլ նախատեսվում է միայն առանց նախնական համաձայնությամբ խմբի կողմից կատարելը: Քրեական իրավունքի տեսության մեջ այսպիսի իրավիճակներում, առաջարկվում է հետևյալ կանոնը՝ **1)եթե Հատուկ մասի հոդվածում որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է հանցակցության որևէ ձև, արարքը որակվում է այդ հոդվածի այն մասով կամ կետով, որով այդ ծ անրացնող հանգամանքը նախատեսված է, 2) եթե Հատուկ մասի հոդվածում որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է հանցակցության որևէ կոնկրետ ձև, հանցակցության առավել նվազ վտանգավոր ձևերով հանցանքը կատարելու դեպքում, արարքը պետք է որակվի հիմնական հանցակազմով (որպես այդ հանցագործության հասարակ տեսակ:**

Հեղինակի կարծիքով օրինականության տեսանկյունից և գործող օրենսգրքի պայմաններում նման որակումները ճիշտ չեն, դրանք հշեցնում են անալոգիայի կիրառում: Մասնավորապես կանոններից մեկն այն է, որ եթե Հատուկ մասի հոդվածում որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է հանցակցության որևէ կոնկրետ ձև, հանցակցության առավել նվազ վտանգավոր ձևերով հանցանքը կատարելու դեպքում, արարքը պետք է որակվի հիմնական հանցակազմով (որպես այդ հանցագործության հասարակ տեսակ): Այսպիսի մոտեցումը հիմնավորված է, որովհետև, եթե հանցակազմի որևէ հատկանիշ նախատեսված չէ հանցակազմում, այն չի կարող մեղսագրվել հանցանքը կատարողներին: Այդ դեպքում հարց է առաջանում, թե ինչու եթե Հատուկ մասի հոդվածում որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է հանցակցության որևէ ձև, ապա հանցակցությունն առավել վտանգավոր ձևերով կատարելու դեպքում, արարքը պետք է որակել տվյալ հոդվածի համապատասխան մասով կամ (և) կետով: Նման որակումը հեղինակի կարծիքով, արդարացի է, բայց հակասում է անալոգիա կիրառելու արգելքին: Հարցի առավել նպաստավոր լուծում կլիներ նման ծանրացնող հանգամանք չնախատեսելը իսկ այն դեպքերում, երբ հանցանքը կատարվեր հանցավոր կազմակերպության կողմից՝ արարքը որակել հանցագործությունների համակցությամբ՝ կոնկրետ հանցանքի կատարում և հանցավոր կազմակերպություն ստեղծել, ղեկավարել կամ դրան մասնակցել, ինչպիսի կարգավորումն առկա է նոր քրեական օրենսգրքի նախագծում: Այսպիսի կարգավո-

ռումը նաև թույլ կտա խուսափելու կրկնակի դատապարտման արգելքը խախտելուց:

Հանցակիցների քրեական պատասխանատվությունը հատուկ դեպքերում վերտառությամբ երրորդ գլուխը բաղկացած է հինգ ենթագլուխներից:

Հանցակիցների քրեական պատասխանատվությունը չհաջողված հանցակցության դեպքում վերտառությամբ երրորդ գլխի առաջին ենթագլխում, քննարկելով չհաջողված հանցակցության իավճակները, հեղինակը նշում է, որ ըստ էության չհաջողված հանցակցության դեպքերում հանցակիցներն իրականացնում են հանցակցության կոնկրետ տեսակ (դրդիչ, օժանդակող) համարվող արարքի օբյեկտիվ կողմի մի մասը, կամ նույնիսկ ամբողջ օբյեկտիվ կողմը (ասենք օժանդակության որոշ դեպքերում) սակայն այդպես էլ չի հաջողվում հանցակցությունն ավարտին հասցնել: Այլ կերպ ասած, նրանք փորձում են հանցակցել, ինչը չի հաջողվում իրենց կամքից անկախ հանգամանքներով: Ուստի առաջարկվում է օրենքի հետևյալ ձևակերպումը՝ <<Եթե հանցագործությունը չի ավարտվում դրդիչի կամ օժանդակողի կամքից անկախ հանգամանքներով, նրանք ենթարկվում են պատասխանատվության իրենց դիտավորության մեջ ընգրկված հանցագործությանը հանցակցելու փորձի համար՝ հղում կատարելով սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածին, ինչպես նաև սույն օրենսգրքի 38-րդ հոդվածի համապատասխան մասին և 34-րդ հոդվածին>>:

Հանցակցի սահմանազանցում վերտառությամբ երրորդ գլխի երկրորդ ենթագլխում, քննարկելով հանցակցի սահմանազանցման հարցը, հեղինակը նշում է, որ քրաեկան իրավունքի տեսության մեջ տարածված կարծիքի համաձայն՝ հանակիցների քրեական պատասխանատվության սահմանները որոշվում են նրանց դիտավորության բովանդակությամբ, որը հստակ կարելի է բացահայտել նրանց միջև կայացած համաձայնությամբ, ընդ որում, բավական է նախական համաձայնությունը տվյալ հանցանքը կատարելու վերաբերյալ՝ առանց մանրամասների: Միևնույն ժամանակ առկա է նաև այն կարծիքը, որ համաձայնությունը պետք է վերաբերի մտադրված հանցագործության հիմնական հատկանիշներին: Հեղինակը կարծում է, որ այն դեպքերում, երբ հանցակիցների նախնական համաձայնության բովանդակությունը ընդհանուր գծերով, առանց մանրամասների հանցանքի կատարման մասին է, այսինքն՝ հանցակիցների դիտավորությունը չկոնկրե-

տացված է, այսինքն՝ հանցակիցների համար այդ դեպքում միևնույն է, թե կատարողը ինչ չափի վնաս է պատճառելու, ինչ եղնակով է կատարելու հանցանքը, ապա սահմանազանցման մասին կարող է խոսք գնալ միայն այն դեպքում, երբ կատարողը իրականացնի որակական սահմանազանցում և կատարի այնպիսի տարաբնույթ հանցանք, բոլորովին այլ օբյեկտի դեմ, որը նախնական համաձայնության բովանդակության մեջ չէր:

Հանցագործությունից հանցակիցների կամովին հրաժարվելը վերտառությամբ երրորդ գլխի երրորդ ենթագլխում հեղինակը քննարկում է հանցակիցների հանցագործությունից կամովին հրաժարվելու հարցերը: Հեղինակը ավելի մանրամասն, նորից հիմնավորում է այն մոտեսումը, որ, եթե հանցագործությունիցկամովին հրաժարվում է կատարողը, ապա մյուս հանցակիցները պետք է պատասխանատության ենթարկվեն հանցակցելու փորձի համար: Հեղինակը գտնում է, որ նման դեպքերում հանցակիցը (դրդիչը, օժանդակողը) իրականացնում են հանցակցության հանցակազմի մի մասը, որը ինքնուրույն հանցակազմ է ներկայացնում: Պարզապես, նման դեպքերում հանցակազմը ամբողջությամբ չի իրականացվում՝ հանցակցի կամքից անկախ հանգամանքներով: Բացի այդ, գործող օրենսդրության պայմաններում, պարտադիր է, որ կատարողի արարքը ծանր կամ առանձնապես ծանր հանցանք լինի, քանի որ ոչ մեծ ծանրության և ծանր հանցագործությունների նախապատրաստությունը հանցագործություն չէ: Դա շատ դեպքերում կհանգեցնի հանցակցի անպատժելիությանը, ինչը արդարացի չէ:

ՀՀ քրեական գործող օրենսգրքում առանձին կարգավորված չեն **համակատարման պարագայում** հանցակցի կամովին հրաժարման խնդիրները: Մասնավորապես արդյո՞ք համակատարողի կամովին հրաժարման դեպքում անհրաժեշտ է, որ նա պետական մարմիններին հաղորդելով կամ ձեռնարկված այլ միջոցներով անպայմանորեն կանխի մյուս համակատարողի կողմից հանցագործությունն ավարտին հասցնելը: Գործող օրենսդրության պարագայում համակատարողը փաստորեն կատարող է և կամովին հրաժարվելու դեպքում փաստորեն պարտավոր չէ կանխելու մյուս համակատարողի կողմից հանցանքի կատարումը: Քրեական իրավունքի տեսության մեջ այն կարծիքն է արտահայտվել, որ առանց նախնական համաձայնության համակատարման դեպքում բավական է, որ համակատարողը դադարեցնի իր արարքները և մյուս համակատարողների արարքները դադարեց-

նելը պարտադիր չէ: Սակայն հեղինակի կարծքով իր արարքները դադարեցրած համակատարողը, ըստ էության, ոչնչով չի տարբերվում օժանդակողից, իր ներկայությամբ ամրապնդում է մյուս համակատարողի վճռականությունը, և հիմնավորված կլիներ նրա պատասխանատվությունից ազատելու հարցը նույնպես կապել համակատարողի կողմից հանցագործությունն ավարտին հասցնելը կանխելու հետ:

Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ գործ ունենք ոչ պատշաճ հատուկ սուբյեկտի հետ, այսինքն՝ երբ անձը հատուկ սուբյեկտի կարգավիճակ է ձեռք բերում օրենքով սահմանված կարգի խախտմամբ, ապա հեղինակի կարծիքով հարցը պետք է լուծվի տարբերակված ձևով: Եթե հատուկ սուբյեկտն այնպիսին է, որ նա իրավբանական նշանակություն ունեցող ակտեր կայացնելու լիազորությամբ է օժտված, ապա նա պետք է պատասխանատվություն կրի որպես հատուկ սուբյեկտ, հակառակ դեպքում նրա նախկինում կայացրած բոլոր ակտերը պետք է համարվեն անվավեր, ինչը տվյալ ոլորտը կհասցնի փլուզման: Ուստի, այդ դեպքերում, նրանք պետք է ենթարկվեն պատասխանատվության հատուկ սուբյեկտով հանցագործության համար: Եթե այդպիսի անձը հրաժարվի հանցագործությունից, ապա մյուս հանցակիցները պետք է պատասխանատվություն կրեն տվյալ հանցագործությանը հանցակցելու փորձի համար: Նույն կերպ պետք է լուծվի հարցը այն դեպքերում, երբ խոսքը գնում է այնպիսի ոչ պատշաճ սուբյեկտի մասին, որը իրավաբանական նշանակություն ունեցող ակտեր կայացնելու հետ ոչ մի առչություն չունի:

Շարունակվող հանցագործություններում հանցակցության խնդիրները վերտառությամբ երրորդ գլխի չորրորդ ենթագլխում հեղինակը, քննարկեով շարունակվող հանցագործությանը հանցակիցների մասնակցության հարցը, առաջարկում է նրանց արարքների որակման հետևյալ կանոնները:

Եթե կատարողը խոշոր չափերի գողություն է կատարում շարունակվող հանցագործության միջոցով և դրդիչը կեսից հանցագործության միանում է հակելով նրան առանձնապես խոշոր չափերի գողության առաջարկվում է դրդիչին պատասխանատության ենթարկել առանձնապես խոշոր չափերի գողությանը դրդելու համար (խոշոր չափերով գողությունը բնականաբար կլանվում է առանձնապես խոշորի մեջ): Բայց այն դեպքում, երբ կատարողը

կիրաժարվի դրդիչի դիտավորության մեջ ընդգրկված արարքը կատարելուց, ապա վերջինս պատասխանատվության պետք է ենթարկվի այդ հանցագործությանը դրդելու փորձի և ոչ թե տվյալ հանցագործության նախապատրաստության համար:

Եթե օժանդակողը միանում է շարունակվող հանցագործությանը դրա նախապատրաստության փուլում, ապա ամբողջ հանցագործությունը մեղսագրվում է նրան: Եթե օժանդակողը միանում է հանցագործության ընթացքում, ապա ամբողջ հանցանքը, դրա վերջնական արդյունքը կմեղսագրվի նրան, եթե նա գործել է ուղղակի դիտավորությամբ: Այլ խոսքով, եթե օժանդակողը գիտակցի, թե արդյունքը որին ձգտում է կատարողը կամ կատարողները, որն է, ապա ամբոջ հանցանքը կմեղսագրվի նրան: Եթե օժանդակողը միացել է նախնական համաձայնությամբ, բայց հանցագործության ընթացքում, կեսից, ապա ամբողջը կմեղսագրվի նրան: Այս կարծիքը առկա է նաև իրավաբանական գրականության մեջ:

Եթե համակատարողների միջև շարունակվող հանցանքը նախնական համաձայնությամբ կատարելու վերաբերյալ պայմանավորվածություն կա, և համակատարողը գիտակցում է, թե ասենք հափշտակությունը որտեղից է կատարվելու, ինչ եղանակով, ինչ չափով և այլն, ապա համակատարողին պետք է մեղսագրվեն շարունակվող հանցագործության մեջ ընդգրկված բոլոր արարքները, այլ ոչ թե միայն նրանք, որոնց կատարմանը նա մասնակցել է՝ բացառությամբ այն արարքների, որոնք դուրս են նախնական պայմանավորվածության շրջանակներից:

Հատուկ սուբյեկտով հանցագործություններում հանցակցության խնդիրները վերտառությամբ երրորդ գլխի հինգերորդ ենթագլխում, քննարկելով հատուկ սուբյեկտով հանցագործություններում հանցակիցների արարքների որակման հացերը, հեղինակը նշում է, որ այն դեպքերում, երբ հատուկ սուբյեկտի հատկանիշ չունեցող անձը, հատուկ սուբյեկտի հետ համատեղ կամ նրա դրդմամաբ կատարում է հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմը, ապա, ամեն դեպքում արարքը պետք է որակել որպես օժանդակություն՝ օժանդակողի հասկացության կատարելագործման միջոցով իսկ գործող օրենքի պայմաններում հարցը լուծել արարքը նույն կերպ որակելով՝ համարելով հատուկ սուբյեկտի կողմից տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմի իրականացումը որպես գործիքի կամ միջոցի տրա-

մադում, որպիսին հանդիսանում է տվյալ անձը, որը փաստորեն իրեն տրամադրում է որպես հանցագործության գործիք:

Եզրակացությունում, ի լրումն պաշտպանության ներկայացվող դրույթների, ներկայացվել են հետևյալ եզրահանգումներն ու առաջարկությունները.

1. Հանցակցությունը հնարավոր է նախքան հանցանքը փաստացի ավարտվելը, եթե հանցավորների միջև առկա է եղել կատարվող արարքների կապակցությամբ համաձայնությունը:

2. Այն դեպքերում, երբ գործ ունենք ոչ պատշաճ հատուկ սուբյեկտի հետ, եթե նա իրավաբանական նշանակություն ունեցող ակտեր կայացնելու լիազորությամբ է օժտված, ապա պետք է պատասխանատվություն կրի որպես հատուկ սուբյեկտ: Եթե այդպիսի անձը հրաժարվի հանցագործությունից, ապա մյուս հանցակիցները պետք է պատասխանատվություն կրեն տվյալ հանցագործությանը հանցակցելու փորձի համար: Նույն կերպ պետք է լուծվի հարցը այն դեպքերում, երբ խոսքը գնում է այնպիսի ոչ պատշաճ սուբյեկտի մասին, որը իրավաբանական նշանակություն ունեցող ակտեր կայացնելու հետ ոչ մի առչություն չունի:

3. Եթե հատուկ սուբյեկտի հատկանիշներ չունեցող անձը տվյալ հանցագործության սուբյեկտ հանդիսացող անձի հետ համատեղ մասնակցում է հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմի (կամ դրա մի մասի) կատարմանը, և նրա արարքը չի պարունակում այդ հանցագործության ո՛չ դրդչության, ո՛չ օժանդակության հատկանիշներ կամ մեկ այլ հանցանքի հատկանիշներ, ապա արարքը պետք է որակել որպես օժանդակություն՝ օժանդակողի հասկացության կատարելագործման միջոցով իսկ գործող օրենքի պայմաններում հարցը լուծել արարքը նույն կերպ որակելով՝ համարելով հատուկ սուբյեկտի կողմից տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմի իրականացումը որպես գործիքի կամ միջոցի տրամադրում, որպիսին հանդիսանում է տվյալ անձը, որը փաստորեն իրեն տրամադրում է որպես հանցագործության գործիք:

4. Օժանդակողի արարքների սպառիչ ցանակ պետք չէ տալ, այլ օժանդակություն համարել հանցագործությանը ցանկացած ձևով նպաստելը, եթե, իհարկե, առկա են հանցակցության հատկանիշները: Առաջարկվում է օժանդակողի հետևյալ հասկացությունը. «1. Օժանդակող է համարվում այն

անձը, ով հանցագործությանն օժանդակել է խորհուրդներով, ցուցումներով, տեղեկատվություն կամ միջոցներ, գործիքներ տրամադրելով կամ խոչընդոտները վերացնելով, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է պարտակել հանցագործին, հանցագործության միջոցները կամ գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները, այն անձը, ով նախապես խոստացել է ձեռք բերել կամ իրացնել այդպիսի առարկաները, այն անձը, ով նախապես խոստացել է չհայտնել նախապատրաստվող հանցագործության մասին, այն անձը, ով, հատուկ սուբյեկտ չհանդիսանալով, հատուկ սուբյեկտի դրդմամբ կամ նրա հետ համատեղ կատարել է հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմը, ինչպես նաև այն անձը, ով որևէ այլ եղանակով նպաստել է հանցանքի կատարմանը:

2. Օժանդակող է նաև այն անձը, որը օժանդակելու համար օգտագործել է այնպիսի անձի, որը օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության:»:

5. Համակատարման դեպքում, որն իր մեջ ընդգրկում է հանցանքը մի խումբ անձանց կողմից կատարելու դեպքերը, երբ երկու կամ ավելի կատարողներ մասնկցում են հանցագործության օբյեկտիվ կողմի կամ դրա մի մասի կատարմանը, բարձրանում է հանցագործության վտանգավորությունը, բայց չի բարձրանում հանցակիցների վտանգավորությունը, քանի որ յուրաքնչյուր հանցակից փաստորեն հանդես է գալիս որպես ինքնուրույն կատարող, դեռ ավելին, որոշ դեպքերում՝ այլ անձի ազդեցության ներքո: Դրա համար էլ հանցանքը մի խումբ անձանց կողմից կատարելը որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք նախատեսելը ճիշտ չէ: Այդ դեպքում պատժի խստությունը պետք է կապվի պատճառված վնասի ծանրության և ոչ թե զուտ խմբով հանցանքը կատարելու հետ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1) Սևակ Պողոսյան «Հանցակցության դրդիչի օրենսդրական բնորոշման կատարելագործման հարցեր», Օրինականություն, Երևան, 2021, № 123, էջեր 9-12:

2) Սևակ Պողոսյան «Հանցագործությունից հանցակիցների կամովին հրաժարվելը», Դատական իշխանություն, Երևան, 2021, № 3-4/261-262 2021, (մարտ-ապրիլ), էջեր 149-155:

3) Սևակ Պողոսյան «Հանցագործության օժանդակողի հասկացությունը, օժանդակության տեսակները», Օրինականություն, Երևան, 2021, № 122, էջեր 3-6:

4) Սևակ Պողոսյան «Հանցակիցների քրեական պատասխանատվությունը չհաջողված հանցակցության դեպքում», Դատական իշխանություն, Երևան, 2021, № 1-2/259-260 2021, (հունվար-փետրվար), էջեր 116-120:

5) Սևակ Պողոսյան «Հանցագործության կազմակերպիչի հասկացության և պատասխանատվության հիմնախնդիրները», Պետություն և իրավունք, Երևան, 2020, №3 (88), էջեր 86-90:

6) Սևակ Պողոսյան «Հանցակցության հասկացությունն ու հատկանիշները», Օրինականություն, Երևան, 2020, № 118, էջեր 12-17:

7) Սևակ Պողոսյան «Հանցագործության կատարողի հարցի շուրջ», Օրինականություն, Երևան, 2020, №120, էջեր 3-6:

ПОГОСЯН СЕВАК АРТУРОВИЧ
ОСОБЕННОСТИ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ СОУЧАСТНИКОВ
РЕЗЮМЕ

В действующем уголовном кодексе РА не полностью урегулированы вопросы, связанные с квалификацией действий соучастников и с их уголовной ответственностью. Есть неточности, пробелы, и в связи с этим предложения по совершенствованию законодательства более чем актуальны.

В рамках диссертации автор исследовал понятие и признаки преступного соучастия, в частности сосредоточив внимание на таком проблемном признаке, как причастность двух или более лиц к преступлению.

Обосновывалась позиция, что, говоря о двух или более лицах, следует понимать только субъектов преступления, а случаи совершения преступления совместно с лицами, не привлекаемыми к уголовной ответственности, предусмотреть как отягчающее обстоятельство во всех составах преступления, в которых совершение преступления с группой лиц предусмотрено как отягчающее обстоятельство.

Затем автор предложил свое законодательное определение исполнителя, обосновал неуместность института организатора, отсутствие обоснованности для перечисления исчерпывающего списка деяний пособника, возможность односторонней субъективной связи, как в случае пособничества, так и подстрекательства, возможность подстрекательства через бездействие.

Ссылаясь на формы соучастия, в рамках диссертации автор дал их классификацию, основы классификации, выражение общественной опасности каждой формы.

Говоря о продолжающемся преступлении, автор считает, что, если преступник присоединился к продолжающемуся преступлению позже, без предварительного согласия, все продолжающееся преступление будет возложено на него, если он осознал, что произошло до того, как присоединился (был проинформирован другими сообщниками) и что произойдет в будущем и куда были нацелены действия остальных

сообщников. По факту это лицо способствовало умышленной реализации целей других сообщников.

Автор также сослался на случаи совершения преступления ненадлежащим субъектом, отметив, что ненадлежащий специальный субъект, по мнению большинства теоретиков уголовного права, не должен нести ответственность за преступление с особым субъектом. Но вопрос надо решать иначе. В случаях, когда мы имеем дело с ненадлежащим специальным субъектом, т.е. когда лицо приобретает статус специального субъекта в нарушение процедуры, установленной законом, тогда если особый субъект наделен полномочиями, совершать действия, имеющие юридическое значение, то должен нести ответственность как специальный субъект. В противном случае все его предыдущие действия должны быть признаны недействительными, что приведет к обвалу сектора.

SEVAK ARTHUR POGHOSYAN

THE ISSUES OF CRIMINAL LIABILITY OF ACCOMPLICES

ABSTRACT

The issues of criminal qualification of the actions of the accomplices and their criminal liability are poorly regulated in the current Criminal Code of the Republic of Armenia, there are gaps and inaccuracies, therefore suggestions regarding the improvement of the legislation are more than urgent.

Within the frameworks of the dissertation, the author has studied the notion and the characteristics of complicity, paying close attention particularly to such a problematic characteristic as the participation of two or more persons in a crime. The position that under two or more persons only the subjects of a crime should be understood has been substantiated, while the cases of committing a crime together with persons not subject to criminal liability should be prescribed as an aggravating circumstance in all those corpora delicti where committing a crime by a group of people is an aggravating circumstance as prescribed by law.

Then the author has suggested his own legislative definition of perpetrator, substantiated the irrelevance of the organizer institute, lack of substantiation for giving an exhaustive list of actions of the instigator and the facilitator, the possibility of one-way subjective communication in case of both facilitation and instigation, the possibility of instigating through inaction.

Afterwards the author has discussed the characteristics of qualifications of actions in cases of different complicity forms. Discussing the issues of failed complicity, the author finds that when the perpetrator renounces the crime or there are other manifestations of failed complicity, the actions of other accomplices should be qualified as an attempted complicity.

Referring to the continuing crime, the author finds that if the accomplice has joined the continuing crime later without prior consent, then he will be incriminated with the whole continuing crime if he realized what was happening before he joined (informed by other accomplices), and what would happen in the future and to what the action of other accomplices is directed in general; in fact, this person has contributed to the implementation of the intention of other accomplices.

The author has also referred to the cases of committing a crime by an inappropriate subject, noting that according to the majority of criminal law theorists the inappropriate special subject should not be criminally liable for a crime with a special subject. However, the issue should be resolved differently. In cases where we deal with an inappropriate special subject, that is, when a person acquires the status of a special subject, thus violating the order as prescribed by law, then, if the special subject is authorized to make acts of legal significance, he/she should be criminally liable as a special subject, otherwise all his/her previous acts should be considered invalid, which will lead the field to a collapse.